Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99
Ц-91

877

891.99-1
Կ-91
-6 NOV 2011

Գ. Մ-Ս.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՇՈՒՂԻ ԲԱՋՈՒ ՆԱՄԱԿԸ ՇՈՇՎԱՑ-ՂԱԼԻ ԿԸՆԱՆՈՑ

1001
Զ611

*Իւմօր-սատիրական էսկիզ*

*(Ղարաբաղի-Շուշւայ բարբառով)*

Բագուի Հայոց
Դպրոց

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1906

22073

26 FEB 2013

„Пушкинская Скоропечатня“ С.П.Б. Лештуковъ пер. 4.

## ՀԵՂԻՆԱԿԱՒՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

«Ուսանողութիւնն է բարօմէտր հասարակական տրամադրութեան»:

«Ուսանողութիւնն է շարժիչ կուլտուրայի»:

«Ուսանողութիւնն է ս. գաղափարների ջատագով»:

«Ուսանողութիւնն է յոյս ազատութեան և պաշտպան հասարակական բարեկեցութեան»:

Հեալբեաթ էտ նիւնց հըմար չի,
Պըտըրըպոլքում կըրթեացէօղ
Ղալ՚ցի խըլխոց կըպչում չի…

«Տուղի քաջի»

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

### I.

Ես երբէք մտադիր չէի տպագրելու իմ այս աշխատութիւնը։

Իմ այս եւմօր-սատիրական էսկիզները ես նախագծել եմ րոպէական տրամադրութեան տակ։ Կարդացել եմ միայն իմ ընկերներին ու ծանօթներին, որք հաւանել են և ցանկութիւն յայտնել տպագրուած տեսնել։

Իմ էսկիզները հետաքրքրում էին նրանց և այն կողմից, որ գրի են անցրած կեանքից և շատերը ճանաչեցին իրանց և ուրիշներին։

Այժմ տպագրում եմ՝ գիջանելով միայն նրանց թախանձագին խնդրանաց։

### II.

## Ո՞Վ Է ՇՈՒՂԻ ԲԱՋԻՆ

Երկիս հերոսուհին, Շուղի բաջին շուշեցի (ղարաբաղցի) մի աղքատ պառաւ կին էր։ Նորան ես պատկերացրի գրքոյկիս երեսի նրկարի վերայ այնպէս, ինչպէս կարողացայ վերարտադրել յիշողութեանս մէջ։

Շուղի բաջին իւր աշխատանքով ապրող մի կին էր, որը մեծ ժողովրդականութիւն ունէր Շուշիում շնորհիւ իւր աներկիւղ, անկաշառ լեզուի։ Երկար տարիներ, վարելով չար-



քաշ կեանք, նա մեծ փորձառութիւն էր ձեռք բերել։ Նկատելով կեանքի զանազան անարդարութիւնները, աներկիւղ և անխնայ կերպով ծաղրում, մտրակում էր մեղաւորին, լինէր նա մեծ թէ փոքր, հարուստ թէ աղքատ հոգեւորական թէ աստիճանաւոր։

Ով որ իւր կեանքում մի անգամ տեսել է Շուղի բաջուն՝ կ'զգայ որ «Շուղի բաջու նամակը Շօշվայ ղալի կընանոց» ոչ այլ ինչ է եթէ ոչ Շուղի բաջու վրդովմունքը ներկայ պայմանների նկատմամբ։

Վերջացնելով խօսքս խոնարհաբար խնդրում եմ յարգելի ընթերցողներիս ներել ինձ երկիս մէջ իմ գործածած գրականական էտիկայի դէմ մեղանչող կոպիտ դարձուածքների համար, առանց որոյ երկս զուրկ կլինէր իւր այն եւմօր-սատիրական ազդեցութիւնից, էֆեկտից, մանաւանդ դէմ կլինէր Շուղի բաջու ոճին, որի անաղարտ պահպանելը պարտք եմ համարել։

Հեղինակ.

## ՇՈՒՂԻ ԲԱՋՈՒ ՆԱՄԱԿԸ.

## ՇՈՇՎԱՑ-ՂԱԼԻ ԿԸՆԱՆՈՑ.

Պըտըրպօլքայ ձեզ պարև
Շօշվայ-ղալի կընանէք,
Դըրդըրվօղված կեանքը սև
Ձեր ղուլ Շուղուց ըստացէք։
Վաթծուն տարէ դուք հալալ
Հաց ըք տըվալ ինձ պահալ,
Միեան ջեանին ձեր մարալ
Մըրըբեօթուն չըմ արալ։
Բա ձեր հացը մոռանամ
Ծոխդ աչքավըս քոռանամ։
Աչքը տիւս կեայ Կափրելին,
Բեխախտ կեալաւ իմ հեօքին,
Մեաչեալ չարաւ որ թեանրին
Ղուլլուղ անիմ ձեր ջեանին։
Երրան լիւս կեա Խըչանին,
Մին քանի օր փոխ տըվաւ,
Ձըրչըրվելաւ մին խիլեայ,
Կիրըգմանաս տիւս իլեա
Հու վըճռեցի մին դեօնայ
Պարդքաս պըրծնիմ ձըգանայ։

Էն գունեայ ես լըսեցի,
Ցաւ ու դեարդեր իմացի,
Պըտըրպօլքայ հայերից,
Հու ձեր ագիզ ալըղօցից։

Ես լըսեցի թեա մի թեամ
(Մեր ընդէզի կըղուլթան),
Թեա Նրանք քաշկավ կօխվալ ըն,
Թամամ զուլալ փոխվալ ըն.
Հի՞նչ հայօթուն, եա՛ հի՞նչ զատ,
Հի՞նչ հայ լիւզիւ, եա հաւատ,
Մըռացալ ըն մին ֆեարկեար,
Կասիս, իսկի, հայ չըն ՚լեալ։
Ասում ըն թիա մին ուռուս,
(Տեսնաս Աստուծ սոտ ա-դիւզ)
Հըյերին լեաւ թակալ ա,
Հայ կեղեցին պըռկալ ա,
Լօխ հինչ որ կար խըլալ ա,
Եննան սէրտը ռեահմ ա ՚նկալ
Խըլած շէհը ետ ա տվալ...
Պըտըրպօլքայ հայերը,
(Բեաշիմ ընրանց վայերը),
Հըվաքվալ ըն թուֆ տեռալ,
Ռուսի ոննը լըպըզալ,
(Նամուսները կըտըրված).
«— Թիա Դո՞ւ շատ ըս ողորմած»...

Ինդիւց մէչին, իմացի,
Թեաք մին մարթ ար գըլըցի



Ղօրթ ա, մինը մին զատ չի,
Ամմա նամուսի պէն չի։

Տինինք, հեալեա, էտ գըրաղ,
Խըյտըռակվալ ըն դիւնք սաղ
Լըսէք, տեսէք հընչերում.
Մեր էս վերջի տարերում
Մին շ.. տ... Սուվօրին,
Մին շան կազեթ կիրօղին,
Հա՜յ ու թօրք բիւզբիւզողին,
Հա՛յին խըյտըռըկօղին,
Հա՛յոց հաըց փըչըցնողին,
Իտի մին ռուս զուլզուլին,
Մեր աննամուս հայերը
Ո՞չ թեա՛ քարկոծ ըն ըրալ,
Անչախ հըմեցէք ըն ՚րալ
Ընրա կըզնէթին հէտը,
Կեանչեալ ըն պերալ տիրեալ
(Իրանց թեանթիւլներավը)
Մեր հայ կեղեցու տանը
Թեա մունք, ջանըմ, խառնւում չընք
Փօլիթիկից գըրաղ ընք...

Իմ ըկընչնիս քըռացած
Հինչե՞ր ասես չըն լըսած...

Ախէր ք՚մատաղ տեսվա՞ծ ա
Երկիր, աշխարք լըսվա՞ծ ա.
— Որ տէրտէրի խըխոցը,
Հայ քըհընի որթոցը

Հալալ, զուլալ, զիւզ, Թեամիւզ
Կէսը հայ 'նին, կէսը ռուս...
(Հունց ա խառնել սրտանց
Պրոլէտկուլտում որ էտ կան...)
— Որ հայ ժամի ժամհարը,
Սեդան, մասունք սրբեօղը
(Էստ քըսան տարէ ա)
Էն շէկ, ուռուս ազգից ա...
Միհեաթթեալ ըս լեա մընում,
Թեա խե՞ չըն զիւնք հայ փըռնում,
Որ, հայ ժամում, հայու հէտ,
Հանցու չ'անէ նա «նէտ» «նէտ»...
— Որ պըրոլէտկուլտա մէջի,
Սըրկաւաքը հայ ժամի,
Ազգի հացաւ մըծանալ,
Ազգի սէրաւ կըծանալ,
Հըմըլտարանը մըտնի,
Հանցու ուսում որ առնի,
Ուսեալ վըրթապեդ ինի,
Հայ կեղեցուց փող առնի,
Ազգի փողերը խեարչի
Մին քանէ տարի կեարթի...
Վի քըմատաղ... ըսկըսի
Բիրդեան լեթվի, պըրծընի,
Իրես, միրես վէր անի,
Լեմսի պինչեանկը հեաքնի
Կըլխին ցիլինդրը դինի։—
Թեա դէ ես մհենկ սանող ըմ,
Ես հինչ՝ հայի «մանախ ըմ»,
Ես շէկ Դօնիկ ժուան ըմ



Ես «կէկյօկ» պար եկող ըմ...
Էհ—կարո՞ւմ ըս «փօր աէմ ռօ»,
Ազգը-մազգը կը չօրտու.
— Որ մեր հայ վըրթապետը
Պըրոլէտկուլտայ քըղաքում
Հայ կեղեցու եքքեա տան
Օթաղներում չի ապրում,
Մըբըլըրեննի, կըրնկապահ,
Օթախում ա նա կենում,
Թիա՛, հինչ ա, սաեղ «սկուչնա» չի,
Խազէայկաս իմ փիս մարթ չի,
Իւրէւր քըշտի նըստում ընք,
Ուռուսեվէր բիւլ'բլիւմ ընք,
Համ օր'նիս ա լեաւ անցնում,
Համ ռուս լիւզուից ըմ վարժւում,
Հանցու որ ես վիքվէրվիմ,
«Դիսիր-արեացիւս» պըշտպանիմ,
Հանցու աեռնամ «մանդի-սրոց»
Ախշարք քըցիմ աըղըրթոց
«Դիսիր-արեացիւս» հիշա պէն չի,
Կօղի, զօրթ ա, մին զատ չի,
Ազգի հըմար փայդա չի,
Դէ, անում ա, եր կինի,
Բեայլքի, մին վախտ, պէտք ինի,
Աղաս, պէն ա, կը մեռնի,
Հայ ազգը ինձ աչք կ'ածի,
Հու վեղարիս խաչ ունի...
(Օրին մատաղ հի՞ր կինի...)

Ես ըրսեցի թեա միթամ

(Ցաւ ա դէ հո՞ւնց հըվատամ)
Պրոըրպօլքայ, մեր, էն լին
Հայ Սանդական Ժողովը,
Տեռռալ ա առափ կարքին,
Սրանի պըղտեօրեած դեօլը.
Զորս տարէ ա Ժողովում
Իւրիւր մէսրն կըրծօտում,
Իրանք էլ չըն հըսկանում
Հընչի՞ ըն Թակ-մըհակում...
Վերչերքըրս էլ, ծեզ մատաղ,
Հէսա իրեք տարէ ա,
Սախս կըտորվալ ըն սաղ,
Միաս սեամիւր սկի լըսւո՞ւմ ա...
Ժողով գա՞գըրս որըն ա
Կենթան վէքի րէվւո՞ւմ ա:
Միթինկ, ամ̃յուգ ըս հինչ ա
Անուն̃ներն սկի տըվւո՞ւմ ա...
Էն էլ, ք՚մատաղ, խափ վախտ,
Մեր էս ազատ Ժրմանակ,
Որ ամմէն մին, իսկ, հայ մարթ,
(Հանցու չ՚ինի շըն՚սատակ),
Պըրտական ա պէն անի,
Կործ կըտարի, պէն շինի,
Զորս Թեարեափը լեաւ էշի,
Թիահըր-Թիւհըր դիգըրցնի...
Էն էլ ք՚մատաղ էս վախտեր,
Հիբ օրիշ ազգ, սանոցներ,
Պեալեակ, ջիւհիւգ, մայարոս,
Գիւրջի, լափիշ, Թօրք, ֆին, ռուս,—



Լօխ պէնի ըն, գործի ըն,
Մերունք ըխշարքից ափ՞ւս ըն...
Աչքըրս երրան ա մընում,
Որ էս լէն բօլ քըղաքում,
Տեսնաս մեր հայ տըղօցից,
Մեր հայ սանոց խըխօցից,
Մին օԹ վէքի հըվաքվին,
Դեարդ-դեարդի տան, խօսք խօսին...
Ամմա դէ քիւչէք ընկէք,
Քըշեր, ցիրեկ ման եկէք,
Հաստ մըհակնի քըշեցէք,
Ըվարայ շօն Թըկեցէք.
Թեա հայ սանոցի չի կեաք,
Եկէք ըեսխս Թըքեցէք:

Ես լըսեցի Թիա միԹեամ,
(Վարսըս կըտրիմ սաք ԹիԹեամ),
Թեա ձեր փեառիկ օրԹիքը,
Ձեր հայ նախշուն ըղճկեքը,
Որ պըտըրպօլք ըն քիւնիւմ,
Թեամիւզ խարաբ ըն տեռնում.
Քեյած ռաչի հենց տարուց
Փեարդեան ճրղում րեսներուց,
Արուռ հայան վեր անում,
ՍըլէԹեանիւմ պըրծընում,
Հայ Թօղում ըն ռուս սիւրիւմ
(Էտ քիչ չի սկի պըտահում),
Որ հայու էլ ըն քիւնիւմ
Ժամ չըն քիւնիւմ փըսակւում
Խօսք ըն տալիս ըսկըսում

Մինասը, ինչի լեա ասում.
Թեա. «Հիսիրնիքակնի մինք
Կըրծնըքնիցնը պեացիւր ինք...»*)
Դէ շընէրը կըպէցէք:
Հու Շուշուն պէց թողեցէք

Մին պէն լըսեցի եսաւ,
Թամամ մէջըս վէր եկաւ.
Պըտըրըպօլքայ քըղաքում,
Հայոց «վիչեր» չըն սարքում,
Էն պատճառավ որ ողղեք,
Իւրիւր մէջ ըն կըրծոտում:
Որ բեազի վախտ պ'տահում ա,
«Վիչերը» կըչանում ա,
Խիլա փող ա հըվաքվում,
Հազարներից անց կէնում,
Ամմա «վիչերի» վերչում
Կապէկ փող չի ըրեւում...
Հու ա պըօկում, հու լեափիւմ,
Դէ հունց գիժեաս, մեղխ հում...
Դէ հունց ասիս հընկերիս.
Դու էլ ըս «վիչեր» պըլօկում:
Ես լըսալ ըմ թեա մինին,
Հըմփըրեօթիւնը հատալ ա,
Հայ սանդալեան ծողովին,
Էտ փակ հարցը պեացեալ ա...
Ասում ըն թեա էն խեղճին,
Քիչ մընաց թեա քըրկօծին:—

*) Հասարակական կարծիքիցը բարձր ենք.



Ղօչչաղը տէմ ա կացալ,
Մընըրըմասի լօխ կիրեալ,
Պեաները նրանց պեաց ըրալ,
Խըչտըռաակալ, աէն ըրալ,

Բա մին պեան էլ իմացի,
Առուի թամամ ճըքվեցի.
Եանի թեա ձեր ողղերը,
Ձեր կըրթեացեօղ խօխերը,
Պէնի, գործի չըն հու նրանք,
Որ տեռնան մեր ազգի ճրաք...
Մին հունց օրի կեարթիւմ ըն,
Ըրըսըրհան սվէրում ըն,
Հանց պարծրակուն ախպրոցը,
Պըժենէ ձեր տըղօցը,
Ըչքըկապիչ գըտերան,—
Էն «գիպլամ»-ա թըղտերան,—
Որոց երրան գիւտիւմ ըք,
Հազար անգամ տեսալ ըք,
Հունց փողալի հեարերը,
Հարուստ աղճկանց տեարերը,
Ազարտ ընկած պըլացած,
Ջախում ըն խեղճ աղճըկանց...
Ասիմ ես ձեզ կարճ խօսքաւ,
Տըղէք տօն ըն եա տեառնիւմ
Իրանց էն քեօհնեա խելքաւ,
«Դիպլամ» առիեած չիբերում:—
Հարուստ հանօր միջեօցեաւ,
Փափուկ տեղեր ըստանում,
Հազարներավ փող առնում,

Հու մինակ իրանց տեսնում,
Նրստատեղը քիւքեացնում։
  Բաքու, Թիֆլիս, եա Ղալում,
Որ ծրույօթիւն ըն մրտնում,
Հու տիւս կեալիս մրրթամէջ,
Հընկէր, հրրեվանի մէջ,
Ընրանց ընտեղ խօսելիս
Մընում ըս հըմրնչելիս.—
Աչքըս քիւցիւմ, Թիա կարին,
Էրկու խօսք իւրիւր կապին...
  Ամմա դէ եղտ պեանէրում,
Իրիւր տակը քանդելում
Միւն-միւնիւ մէս օտելում,
Տէս հունց կիւլեօխ ըն հանում...

  Ասումըն Թեա վէրչէրքիս,
Հայ-Թօրք գիւլում, սև տարիս,
Ջեաուչիք օրսկան շնէր ըն ք'ցեալ
Թիֆլիս, Բաքու ման եկալ,
Հանցու հայ հեաքիմ եարին
Մեր հայ շէնէրքը ղարկին,
Խեղճ եարալու հայերին
Հանցու մահից ըզատին,
(Կեաւ դօլլուղ դատ էլ տուին,
Կեաւ անում էլ խոստացին...)
Ամմա կըրացին վէչ Թեա
Մինն էլ փրունեն, չ'հեաններեամ լեա...
  Հայ, շանից շատ, հիաքիմնին,
Էտ, աննամուս փախկոտնին,

1001
9611

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922



Թօրքից տեօղեօյ ին ընկալ
Պըճըխտանկեր ին մըտալ...
  Կօղի կըգըթների մէչ
Նըրանց ըեսին Թըքեցին,
Ինչփից համար, դէ, էտ հէչ՝,
Թեք ըեսներին քըսեցին,
Թիֆլիս, Բաքու նըստեցին...

  Ստիւք ըն ազգի մեր չիւչըը,
Աչքըներիս մեր լիւսը,
Միյլըքադաք ըվարտած,
Ազգի փողու կըրթեցած,
Միլհեամ տինեօղ մեր եարին
Ինչինէրնին—հեաքիմնին...

Խըխըլկըլխին տիւս ա մնում
Պարզ պըրըվանայ էս ա մնում.
— Ազգը հինչքան ծախս անի,
Ինչփից երրան խարչ անի
Ամմա էլհեա ըռտերում
Կտրած կիւթեանն ա ըեւում...
  — Տալ մի գըվոտի անում
Ազգը տի գատ չի լըսում...
  — Ման ա կեալիս շէնէրքը
Հեաքիմի տեղ դեալեաքը...
  — Շէնը քեասեադ ըշկօլից
Կէգը հեասրեաթ քըրօղից...
  — Շէնից քաղաք քինեալը—
Էշեաւ հըղէ ինեըլը...

— Պուրթ, կաղ, պէծրեակ մանողը
Ճըխարակը—իլիկը…
— Ջանն ըղաղող փիրկեանքը—
Զըխմըխաքար Թիրփեանկը…
— Աղգի հեաքին էլ չաթաղ—
Տըրեխ, չոխա, չալ փափաղ…
— Ղարադամը հիւրթեավէր…
— Կըտավ կեօրծեօղ ճըլկավէր…
— Եղ տիւս պիրիլ խընէցեաւ…
— Պանիր շինիլ քըսակաւ…
— Ցորէն աղալ, կըլխացաւ
Զընչըխաթան, ճըղացաւ…
Հինչքան ազգը ծախս անի,
Տըղօյ երրան խարչ անի,..
Խըխըլկըլխին տիւս ա մնում
Պարգ պըրղանայ էս ա մնում…

Իսաի զատեր ի լըսում
Էն դունեա հու պըլանում…

Բա որ իւսաիւք աէղին 'նին
Բար չի մաղուիլ մեր կըլխի՞ն…
Անխելք էշին կը պեռնին
Համ էլ մեչքին կընըստին։
Անդար Թիւլ-միւլ հէյվանին
Կիւլ էլ կօտի, կըապանին,
Հանցու կաշին նրա հանին
Տըրեխ շինին քըշքըշին։—
Որ դու պողւաա ծիլի 'նիս,
Որ պէնի մէչ չը լոռվիս,



Էլ հօ՛ւնց կըտաա փըլստըրատի։—
Ինչի քեզ լեա ժենկ կօտի…
Ապրելը, ակի, հիշտ պէն չի.
Առանց կռծեկ պատ պինտ չի
Թարը քարին մընալ չի…
Մեր էս աշամ—կեծակ—կրակ,
Դիւշմեանը շատ, ժըմանակ
Անդա՛ր քաղաքըշէն, ծըմակ—
Կըրակ կընկնի կը կորչի,—
Ենման լեա դու վա՛յ կեանչի…

Բ.

Էս սեասերից ես թամամ,
Ծաք ճաք ի կեամ փոլ ի կեամ...
Վրճրռեցի մին քինեամ,
Իմ աչքավըս ես տեսնամ,
Որ լըսամըս տէղ քըթնիմ,
Մին լեաւ խւնջիւնց քըրքըրիմ։

Լհեա որ հողից իլեա պօք,
Ծրնպըրուեցի Պըտըրպօլը...

Որ վակզալը ես հասի,
Խըսոցը հատը քըշեցի,
Հոտի ճոնդը փըռնեցի,
Վազնէսենսկուն, թուշ, հասի։
Գըրվիւզիւմը պըտհեցի
Սև կարճ բուրաշկան հեաքին
(Լեա որ տեսի ճըրնչեցի)
Թեամիրբարանց Ալիքին։
«— Վույ Շուղի բաշ էտ դու ը՞ս,
«Աչքիս, գըլխիս զօնաղ ըս...
«Մեր խօխեքը հըվաքված,
«Հէն ըն ինձ մօտ նըստոտած,
«Քինինք ինձ մօտ, կըտեսնաս,
«Համ էլ ինձ մօտ կըմընաս...»

Լհեա որ մըտինք մունք օթաղ,
Դհեատի բեսիս կալի մաղ...



Վո՜ւյ իմ Աստուծ, վո՜ւյ իմ Տէր
Հընչեր տեսի, թիա հընչե՜ր...

Խըռնըր խալթիչ նըստոտած,
Մեր ղըլըցի լըկըտնին,
Մէչըրըներին նըստըցրած,
Ջեահիլ, չիւհիւղ քըծերին...

Պիվօ, կինի, արեաղ, միազեա
(Աստուծ վըկայ լօխ դիւզ ա)
Թափած ստօլին, եա տափին,
Հանցու լակին, հու լեափին...
Հըռհըռում ըն, քըռքըռում ըն,
Ծըղծըղում ըն, ծըվծըվում ըն...
Վո՛ւյ իմ Աստուծ, վո՜ւյ իմ Տէ՛ր
Հընչեր տեսի, թեա հընչե՜ր...

Մէչ տէղ նըստած էս հո՜ւ ա,
Նեօքեարմալունց Միշան ա,—
Թեա նա էլ դէ հինչ դատ ա,
Սաղ ախշարքըս գիւտիւմ ա...
Օնքավ անում, աչքավ անում,
Էն սև գեօզեալ ըչքերում,
Կէծակ, ալաւ, կըակ անում...
Որ աչ ու ձախ ճըլմքում ա,
Ըղճըկօրանց կըակում ա,
Հու մին թիավիւր 'նղի եշում,
Լօխճին էրում փըթօթում...

Ջանըս ձեզ սաի հո՜ւ ա

Էս Սևքաշանց Քեարեամն ա․
Էն շան որդան նրանց մէջին,
Սաթ բուսաթավ, բոյ-լաչին,
Սև հիւլ եաշմա օնքերավ,
Ղըղըլ ղուշի կէռ քըթավ,
Հենց լեա դեաստի ձոկուում ա․
Ամմա փըռնած պեաներից,
Լեթված պչներ ընելից,
Առռի մէսրա թափուում ա։

Ջանըս ծեզ ասի հո՞ւ ա,
Էս Շընանունց Լեօնն ա․
Էն շան որդան կ'ասիս լեա,
Էս ախշարքին տեարըն ա,—
Չի՞նչ ղատեր ա նա անում,
Դէ նըմակում կըիլի՞ ա…
Բօզինըսկու ըշկօլում,
Չեալեա դէ նա շեակիրտ ա,
Բաբբադ շկօլը որ պըրծնի,
Դէ էն վախտը հինչ կընի…

Եննան, ջանըս ձեզ ասի,
Նըրանց մէջին հի՞ւր տեսի,—
Փորմը փոխած սիւրթիւկին
Տէր Կեաւիթեանց Գիրիշին։
Որ ինձ տէսաւ ճինանչից,
Տէսնամ մին թեահրը փոխվից,
Հու եա տեառեաւ գէրի ինձ,
Մին քանի խօսք նա խօսից։



— «Դէ, Շուղի բա՛ջ, կընեըիս,
Դէ հուՆց անինք, հը դէ տե՛ս—
„Եախտ“ կըլուբում խաղմ-անում,
Ընրա հմար ըմ սիւրթիւկում…
Ղօրթ ա գործը շատ ա ակեղ,
Դէ օգտ օնինք մունք ընդէզ.—
Տարած ընք հարիւրներավ,
Պատառ վէրչը չի պերաւ,
Ես նա Միշան քեանդվեալ ընք,
Առռի թեամիւզ թեփռվալ ընք,
Ամմա շատ մէծ յիւյս օնինք
Որ հազարներ կը տանինք…
Մեր ղըլըջի որդեքը,
Մեր էս վէրչի տարեքը
Պատառ փիս ընք սըվէրալ…
Էրկու էքքեայ զոլամայ
Կամպանեայ ընք մունք կապալ․
(Դէ հինչ կեղինք քըղանայ)
Մինը բիլյարդ ա թիք տամ,
Հայտնի „Րուսկի Բազարում“,
Մինը կարտին ա ծիք տամ
Մեր սիրած „Եախտ“ կըլուբում։
Մնացած խուրդա որդեքը,
Թիւլըն դիբայ ըղձկէքը,
Փառք Աստծուն, շատ գոհ ընք,
Քիւսիւբէօթիւն քեաշիւմ չընք,
Տանից փող, եա սախպենդեա
Ըստանում ընք հեար երդեա…
Պըտահում ա հինչ ծացկիմ,
Դէ քըղանայ հինչ թաքիմ,

Որ չիտ փողնիս կըլխում ա,
Տան'լ ընք տալիս, ծախսում ա,
Շորնիս գալօկ ընք տինիւմ,
Եա ծախում, ծրխծրխօրում...
Քեօշնայ սիւրթիւկից, գատից,
Հեաքիս նըման, զատերեց,
Դէ ըինիկից առնում ընք,
Ժըմընակավ հաքնում ընք,
Մինչև տօնը, եա կլուբը,
Փող կըքիցի մեր ջուբը»։

Եննա, ջանըս ձեզ ասի,
Էլ նըանց մէչին հի՞ւր տեսի.
Տեսի քիւնջիւմ պըրնօտած,
Հեարփեած թամամ լիւլ կըտրած,
Տէր Մարկօսանց Թէօսին,
Գիւլնազարանց Պէտրօսին,
Քեասուն տըղայ Վանէսին,
Բարունց գեօզեալ Մօսէսին։

Վույ իմ Աստուծ, վույ իմ Տէր
Հընչէր տեսի, թիա հընչէ՞ր...
Հի՞նչ բառեր ըն կօրծ ածում,
Թեա հի՞նչ խօսկերք ըն խօսում...

Կողքի գօլի օթաղից
Սեասէր ար որ էր ար՚նիւմ.
— «Ա շան տըղայ, դէ բօլ ա,
Էս տեօնիւմ էլ քօլլեցի՞ր
Խէ սատէղ, հի՞նչ ա, կըհօլ ա̃
Քիլլիտ եկի մ՚նէլ տեսի՞ր...»



— «Ըստաքաննիթ դէ լըքցրէք,
Ածինք, խըմինք, քէֆ անինք...
Թա̃փէ բօթուլին տակը,
Կե՞ցցէ մեր հայոց ազգը...»

— «Դը՛յշ նը՛յկ ցա՛կա՛ն խո՛ւմբ
«Գը՛յնա՛նք դէ՛յբ Սա՛յսո՛ւն...»
«Դը՛յշ նը՛յկ ցակա՛ն խո՛ւմբ
«Գըյնա՛յք դէբ Սա՛յսո՛ւն...»

— «Դէ, զուռռումսաղ, ծէն'տ կըտրի,
Տու հի՞նչ դըշնըկցական ըս,
Լակքում ըս՝ տէղըթ լակքի.
Դու հի՞նչ քեարվան կըտրող ըս...
— „Դըշ-նըկ-ցա-կան, խումբ
Քի-նեանք դէբ Սա-սուն...“
— «Գիւղիւմ ըս թեա ղըռըշմալ,
Ընդէղ պիվայ ըն շարալ,
Հանցու վէր միւքթեա լակիս,
Հու փըսլէնքըտ վէր ածիս...»

— «Պահ, հա, հահ, հա... խա, խա, խա...»
— «Դէ բա Մօսին նըհա̃խ ա...»
— «Ա՛մմա Մօսին հո̃ւնց ասից,
Խեղճ Արտիւշին հո̃ւնց կօթի՞ց...»
— «Մօսի, մատաղ, կէ՞նացըտ...»
— «Մօյսկա, լեաւ էր ասածըտ...»
Արտիւշ էլ սիաս չըս հանում,
Բա էլ Սասո̃ւն չըս քիւնի՞ւմ,
Թեա ընտէղ վախ ու մահ ա...»
— «Խահ, խա, խա, խա... հահ, ո̃ւռռայ...»

— «Ի՞նչ ըք խոփ հըռհըռում,
Լոխըս երրաս շըն՚հեաչիւմ,
Որ ընդեղ չը կան պիվայ,
Որ ընդեղ մինեակ ահ ա,
Որ ընդեղ վախ ու մահ ա,
Հո՞ւ ա ռազմի ծըղանայ
Քինի Սասուն տըղ՚եանայ...
Իսկի Ղալան չըք քիւնիւմ
Ձեր քիւվերանց ըպատում,
Թեա հինչ ա 'նդեղ վախ ա
Ես խէ քինեամ շան տըղա՜յ...»
— «Պա՜հ, հա. հա, հա... խա, խա, խա...
Խա, խա, հա, հա... հահ, ուռռա՜յ...»
— «Լեաւ ըսեցիր Սըրտիւշ ջան,
Գէնացըր քու ղարդաշ ջան...»
Աչքիս տակաւ երշեցի,
Մին քանիսին ճըն՚չեցի.
Տեսի հաւնց նիւնք, կըտորւած,
Էրկու սօլին թուփ տեռած,
Սև փուլ, կարա, պատ, խըռնօտած,
Ձըխկը-չըրխկը քըցեօտեած...
Նըրանց մէչին էս հո՞ւ էր,
Գօսբօղինենց Վալօդն էր,
Գիւնչիւբիւթենց Դաւիթն էր,
Ձըճեօկեցի շատերին,
Էն զօլերքին ըեւում ին...
Հո՞ւ ին, հո՞ւ չին, հու վէր 'նին,
Ցաւ չի, որ դիւնք հայեր ին...

Ասում, հընչե՞ր ես տեսի,



Տէ՛ր իմ, հընչե՞ր լըսեցի...
Ըրըռհանեան մեր վէր կեա,
Հեալեա էս մէզ խըրեդ ա
Հըմփիւրէօթիւնըս հատից,
Սէրտըս լըցվից տըրաքվից,
Րեսիս մազը տէն 'քցեցի,
Հու պերանըս մին պէցի.

— Ա. շա՜ն տը՜ղէք, հընչի ը՞ք,
Պէն, զօրծ թօղած հընչի ը՞ք,
Բա էրկիրը քեանդվիւմ ա,
Բա ազգը ձեր հեանկվիւմ ա,
Եաման դիւշմանի ձեռքաւ
Հայ շէն-քաղաք, կրակւում ա,
Թափւած, ծըծւած, հայ առնեաւ
Մեր քիւչէքը կուպ՚րւում ա...
— Բա ձեզ, իսկի, հասնո՞ւմ չի,
Մորթւում ազգի բըղղօցը,
Ձեր անգուճը լըսո՞ւմ չի,
Վայկանչը ձեր աղպօրցը,
Եա ծըվւոցը ձեր մօրանց,
Բ՚եարուռ տեռնւում քիւվերանց,
— Բա ձեր ազգի տանջանքից,
Տանջւում ազգի պըռանչից,
Պարանն կեալիս վըղ՚տակին
Հարիւր տարւայ մըռըլնին...
— Բա դո՞ւք հո՞ւնց ըք տիմեանիւմ,
Էտ հընչեր ը՞ք տուք անում...
— Մին երշեցէ՛ք, հի՞նչ վախտ ա...
Ա ձեզ փըռնի սև սախկայ,

— Էտ հը՞նչի ը՞ք… էս բաղտ ա,
Ա՜ղրահէլը ձեզ կօխտայ…

Ըսեցի հու պըրծեցի,
Թըքեցի հու տեւս եկի։

— Փըռըվէրվէք, թեա տուք մա՛ղվէք,
Շուշւայ-Ղալի կընանիք,
Բեաղաեավեարի տղէք պէրիք,
Մըծըցըրիք, կըրթըցրիք,
Հու Պըտըրպօլք ղըրկեցիք,
Որ փառք պարծանք վայելիք…
Դէ հի՞նչ ասիմ, հի՞նչ լըսիք—
Էս տըղօցա՜ւ եա Նըստիք…

Դըրվիզիցը տիւս կեալիս,
Հէնց էն լեա չար սըհաթին,
Պըտըրհեցի իմ բաղտիս
Ադիւնցեցիւց Նիկալին։

Ը՜հմ, հունց երրան պըրծեցի,
Թամամ աղուս թըփեցի.
— Ա. շա՛ն տըղայ իմ բաղտիս,
Պըտըրհեցի քեզ վախտին.
Ցիժաուն տարի խեափեալ ըս,
Ազգի փողավ կարթեալ ըս,
Որ էս մեր նեղ օրերին,
Ծար ինիս ազգի ցաւին…
Մհենկ փողերը խեարջեալ ըս,
Հու կըրթիլից պըրծալ ըս,



Ըստեղ, իտի, վէր ընկալ,
Խօստում, հաւատ, մըռայալ…
Խէ՞ չըս երկիր տու կեալիս
Հանցու պարտքըթ կըդարիս…
Ան՛մը հի՞նչ ա քու պեա՛նիտ,
Ա. եաման տա քու ջեա՛նիտ…
Բա տու իսկի խե՛ղճ չոնի՞ս,
Ա. տու գիւլլի փայ ինի՜ս…

Պեարեակ սեասեաւ ըսկըսից
Տէսեք, հի՞նչ ջեօղաբ տըւից.
— «Է, Շուշի բա՛ջ, քըմատաղ,
Խէ՞ ըս իտի կըդնըւում,
Մեր հայերը, լօխ ըն „կաղ“,
Հօ՞ւ ա խօսքը կըդարում…
Դէ, մհենկ, իստի տիրվեած ա
Հայ ճըկատին կիրվեած ա,
Խօսքը տալը մին փեանդ ա,
Բա հօ՞ւնց ստանանք ստիպենդեա…
Մինեակ ես չըմ, լօխ ըն ստի,
Ոչ կըդնըվի, ոչ ղըստի…
Հա՛շւի, քա՞նի սանողներ,
Հարիւր, էլ շատ, հազարներ—
Ազգի փողաւ կեարթեալ ըն,
Տեռալ—մէծ մարթ, ինչիներ,
Լ՛հեա վէր շկօլից պըրծալ ըն,
Տրեալ ըն օսսերին չինէր…
Լօխ մին զատ ընք, մին ջիւռեա,
Խէ՞ ըս կըդնւում ինձ երրայ։

Մեզ փող տըւող մեր ազգից,
Ստեփանդեա տ'ւող հարուստից
Հո՞ւ ա գըլխան մեզ կեանչիւմ,
Հո՞ւ ա հաշիւ պըհանջիւմ,
Ինատի, խեղճ, զատ ըս վէր'ն ա,
Տէղ չօնին տիւնք էս գունեա,
Խըղճիս սեասը ծեռքի՞ս չի,
Կ'ասիմ, սիասը կըկըտրի»։

Լ'հեա վէր էս էլ լըսեցի,
Առաի թամամ կըտղեցի,
Հասա մըհակըս քըշեցի,
Դէ Շուղի պէծըեակ կիցի…
Ըսկըսեցի սրա չեանին.
Ը՞հմ մին, էրկու, էրկու, մին…
Տեսնամ ռաչիս լէն մէկնվից
Հու սուրփ Աստօծը կըտրից։

Քիւնչիւմ կաղնած ռուս մարթը,
Գըրըղըվօյ սալդաթը,
Մին էլ տեսնամ մրաացաւ,
Ձեռտի տըւաւ, ղըրաղ կացաւ.
— «Օֆ մայադէս տի, բարայ,
Պայղօն Տրեպօվ տի նուժնայ
Տիբի մինդայ պօյէսիտ,
Դէլօ բօլշօյ ուկաժիտ,
Զդելիտ տիբի գօլօվայ,
Զօրնի սօտնի բօլուշայ,
Պայդօն բիտ խը, գուբինայ,



Կակ տի, սիչաս, ուբիլայ»։
Կռնը կոռնուքըս քըցեաւ,
Մէյդան քիւչեայ չափ տալաւ,
Քնիւմ ինք եալլա մին բաշաթ,
Դիբի երընալ-կուբուռնատ…
Սերտըս տեռած սև թըխօց,
Ջանըս ընկած կըրակ, մըղխօց,
Պըկիս բօղման խըղտելիս…
Պըըըսպեկտեաւ ընցնելիս,
Բիրդեան սըլ'պըղտ, պըտհեցի
Ծեօխտ հայ աղճկոց, ղըլըցի․—
Տօռճի Քեարղին ըղճկանը,
Մին էլ Քեասիւն թօռանը։
Ըռաչինին որ տեսի,
Տէղըս սառած լեա մնացի…
Պատառ տէղըս կըղնեցի,
Տիւնց մին հաւուր կըղնըցրի.
— Աղճի, Նառուշ, էտ առւ ը՞ս
Աղճի, տո՞ւ ստեղ, հընչի ըս…
Աղճի, քու մար որ ըղղա՞ր,
Հընդեր, հ՞րեվան կրտեօղղար…
Բա հօ՞ւնց նա քեզ պէց թօղից,
Հու էս քիւչէքը քըցից…
«— Է՜, Շուղի բա՞ջ, անցկացաւ,
Էն քու դեավըը վերացաւ,
Մօր խօսք, տէս, տէն, լօխ սըրփվի՞ց,
Շըպըրտէ՞ցինք կօրաւ քնից…
Մհենկ մունք սօտ չալ գեամկըատ ընք,
Աղղը, մաղգը ճ'նեանչիլ չընք…
Ցիմնած հէնց էտ «պրինծ իփի»,

Նըշանածըս փոխեցի,
Հայ աղի տեղը սիրեցի,
Անուէր նացեալ մին տըղի,
Մին կըսը-հայ կըս'-ուրսի,—
Խէ հայ ինի, լօխ մին չի՞,
Ազգը, ազգին թող դիպչի...
Մընանք պարաւ, թեահղի ըմ,
„Պուբուլիչնին“ կըփակին...
Ընդէգ, օր մէչ, սերտում ըմ
Խիմչի՝ կըքեր, եւ, կարքին,
Հանցու տեռնամ խիմիկօս,
Հանցու շինիմ քէթը-„նօս“:
Մաքսիմ Գօրկին ասում ա,
Վէր էտ խիմչեան հըրաշք ա,
Ամենատէս մին աչք ա...
Խի՛մչեա, խի՛մչեա, վուչ խի՜մչեա...

«Տըվօյ զօրկիյ սմէլի վզգլեադ
«Պրոնիցաետ վէզդէ վրեադ.
«Ի վօզնեննօյ մասս սօլնցայ,
«Ի վի չաստի նաշ սերդցայ,
«Նաչալ ժիզնի նա իսչետ,
«Անա նայդետ, դա, նայդետ.
«Իստեկլեաննի վի կօլբի,
«Ատ նաշ ժիվօյ իստօլբի,
«Ժիվօյ տեյլցօ զաստաղիտ,
«Ի նամ, վիսեմ, պակաժիտ...
«Վէդ վսէ մի դէտի սօլնցա,
«Ի սերդցայ վսէխ վսեօ բյօտցա»..,

Տեռնեա՞լի ըմ խիմիկօս
Շինե՞լի ըմ քէթը-„նօս“:



Դէ լըսեցէք էն մինին,
Բեասիւն թօռանը խըսքին.
— «Տըվարիշչին հ'մամայն ըմ,
Պըրաշու ներխ, հինչ անիմ,
Հըյերենիւմ քիչ կաղ ըմ,
Էն պըրիչինավ որ գօմում,
Էտ եազիկ գործ չինք ածում.—

Մինք չինք կիսլի պատրիետ...
Ես քեզ կասիմ ռըսերէն,
Որ Կավկազ նաշ իսպասեօտ
Նաշ սըրտի-սիւն նաշ — „Էս-Դէն“...
Տվարիշչ Շուղի, սլուշայ տի.
Միշ   իլեալ ըս տու չեստնի,
Պըոլետարիյ տիպիչնի...
Նօր ըս եկալ իզ Շուշի,
Տի իզնաեշ վսէխ լուչշի,
Սլուշայ տես խօսկըս դիւզ չի՞.
Հայ թօրք ըմսպրւց պատճառը,
Նէզ նեացնեայլնի տէնդէնց չի՞...
Էտ ըեզնեուցը տէմ ճարը,
Տօյլկօ միան—„Էս Դէն“ չի՞...
Էտ տէնդէնցի պաշտպանը
Դըշնըկցական պարտեան չի՞...
„Էս-Դէք“-ըս էտ մըտքին ընք,
Հեարբերդեա մունք ասալ ընք,
Որ ռուս „հեավսեա-լիւթիզմից“,
Ստարիյ խըըթնած ըեժիմից,
Շատ թիւնդ պըավակացյեա կար,—
Էտ յայտնի ար, էտ պարզ ար,

Կոյր Թօրք մասսան միջից ար...
Մունք ասալ ընք ղրաղ կացալ...

Մարքս, Նոր-Դաու, Կաեուցկի,
Նաշի Ծուանդելխաի.—
Վօտ սպասեննեու ապօրան
Դրուգօյ վըխօդ նէտ նօրան...
Նաշ տրուդեասչի խեղճ մասսան
Լըցնում ա հրուստի կասսան,
Վիսխու ժիզն նա տրխուղխտցեա,
Էքխս պլեա տիրետցայ
Կապիտալիստ հայերից,
Նրանց էն ալչնի ճեանկերից.—
Որ րասցենկան տիրխուղի,
Րավնամէրնի պիտ՛ ինի,
Պիտ՛ նականեց վերչ տինվի.
Էքխսպ՛լեատացեան տիրխուղի.
Պիտ տ՛րա հըմար միանան,
Պրոլետարիք վիսէխ ստրան,
Լոխճին ճարթին էրին փ՛շրին
Պրօտեկտօրատ ձեռք քիցին։
(Տվարիշչ Շուղի զօրթ լեաու չըմ
Ջրրկացած խօսքերք խօսում...)
Հա, ըմմ մ, խօսքից չի շեղվիմ,
Հի՞նչ ասիմ քեզ հի՞նչ ասիմ...
Ըհմմ մ..., եավաշ էլ հի՞նչ ասալ,
Մարքս, Կաեուցկի հու Լեասսեալ...
(Մէտրս չի 'սօր պիտ նրստիմ,
Կրեամրս անկիր մ՛նէյ անիմ,



Հանցու ստի վախտ տէմ չ՛ընկնիմ,
Իւրիւր եւսայ շըրրօտիմ)։
Ըմմ մ..., հա,—սա եա ապօրան,
Դրուգօյ վըխօդ նէ՛տ նօրան։
Մի նեասեադիմ „սօտցալիզմ",
Դայօ՛յ, ուգկի նացնալիզմ...
Թօղ կօ՛րչի էն աֆերան—
Դաշնակցական հայ պարտեան,
Զաչչիտնիկ հայ բուրժուի...
Կակ ժէ մօժնօ, տակ, անիլ,
Թօրքի ուշիքը կրաբիլ,
Ասկեարեանը վզեատ անիլ,
Թօրք ղըլըցուց սով մահ 'նիլ.
Մեր տովարիշչ Ըեմնեակը
Վիդէլ, հունց հայ խօխեքը
Թօրք ուշերավ խաղում ին,
Տէս ու տէնը չ՛ըպըտում ին -
(Վէր Թօրքի ին ուշիքը,
Հըստադում ա Ըեմնեակը.
Նրա պրօլետար պըիվի՛չ՛քն ա,
Նրա շօն կերած փեշակն ա—
Հայ, Թօրք տէլի չլեններըը,
Իւրիւր անա ճեօկելը։

Թօրքերին հեա խօսեցինք
„Դըշնըկցիւթիւն" փըչըց'նինք,
Հու միյասին բօկրսինք
Սօտցալիզմը-քարօղինք։

Էս պատճառավ տովարիշչք,

Սոտ չալ դեամկրատ Սիմոնը,
Մարտիշկ'աչքեանց Լեւոնը,
Շընըստեանց Բեժնեակը,
Նեօքեարմալունց Տիգրանը,
Պուստաղվօնենց Իսեակը,
(Կոտրած քըթեօլ, մէչ'ն ընկած
— Գըրաժդանին Քեափլեվը)
Վօտ էս մեր հայ բաղվիտօյ,
Պակալէնին մալադօյ,
Հըւըքվէցինք խօսեցինք
Ի, վօտ, մունք տակ վըճռեցինք.
Հայ ցերկօվնի Սավէտից,
Մեր ազգային փողերից,
Իստիղէնտից ասօբի,
Միղ տան շատ շիւտ պասօբի,
Մարթը հարիւր մանէթ փող,
Ուժէ պատրաստ օնինք հող,
Որ ըսկօրօ պալուչիմ
Ի մի Թիփլիս պանեվիմ»։

— «Պերվի դէլօն նաշ բուդիտ
„Դաշնակցութիւն“ բաղարիտ.—
Կեառնի մօրթավ մէջ մըտնինք,
Իբրև կարքին հայ մարթիք,
Եննան ըսկսինք հու սերմինք,
„Լեւիքը“ դիր մեզ քաշինք,
„Պրավօցը“ ճարթինք փըշրինք»։

— «Վտարօյ դէլօն նաշ բուդիտ
Կապիտալիստին դուշիտ,



Հայ բուրժույին լեաւ կրուտիտ,
Հողատէրին բաղարիտ,
Հանցիւ նիւնք ըղքըռտանան,
Դաշնակցիւթեան փող չի տան,
Հանցու կարին ոչ գինվին,
Հու Թօրքերին ահ ինին։—
Լօխ էս մեր սուրբ գործերին
Թօւրքերը մէզ քեօմեակ կ'նին»։

— «Տրէտիյ դէլօն նաշ բուդիտ,
(Դիլեակ անիմ քու ջեանիտ),
Հայ նան Թօւրքը բըրըշցնինք.
(Դըշնըկցեական հա՜ հեա՜չի)
Դէրը Մօլլին պիտ պաչի,
Իսկ հայ տըղին Թօւք հաջին,
Բա էլ հունց նիւնք բարիշին
Կա՞կ ժէ մօժնի ինաչի»...

— «Լօխճի մէչին եա ռաչին,
„Էս-Դէ-“ք պիտի սեաս կեանչին,
Ուրիշները Թող կորչին!»...

— «Լօխճի մէչին եա ռաչին,
Պայմի ճեղնը ձըռ'մէչին,
„Էս-Դէ“-ք փըռնին կընանչին!»...

— «Դըշնըկցիւթեան հիւրչիւմին,
Նէզ նեաշնեայնի Թիւրչիւմին,
„Էս-Դէ“-ք կաղնին „ստօյ“ անին!»...

— «Պանիսլամիստ Թօրքերին,
Մասսաների զարբէրին,
„Էս-Դէ“-ք կաղնին „սաօյ“ անին!«...

— «Ղօրթ ա Թիփլիս փորցեցինք
Ինիլ „մէչին“, եա „ռաչին“,-
Ռաչի փորցը, պիտ' ասինք,
Շատ փիս խարաբի տուինք.
Կարացինք. վէչ Թօրքերին
Ռաչին կաղնինք „սաօյ“ անինք...
Ինգլիւնց եաման զարբէրից,
Էն Թօրքերի զեահմէրից,
Լըղ'նիս պատառ էր տեառեալ,
Հու վրճ'ռեցինք ղրաղ կենալ,
Ս. լեա „Նազար—ղենէրալ“...
Ըռէխներըս-պեաց արինք,
Ըրեսներըս սև արինք,
Հեաքիւնիս պինդ քըշկռեցինք,
Փախինք բեասպեար պուք արինք,
(Ջանն ազիզ ա հո՞ւնց անինք)...—
Դէ մունք սոտ չալ դեամկրատ ինք,
Կօղի վէչինչ չ'արեցինք,
Հինչ կարող ինք արեցինք։
(Տրանից բեւում չի որ մունք
Թօրքէից, գործից փախում ընք...»)։

— «Նաստօեաշչի-բուղուշչի,
„Է'ս-Դէ'“-ք, „Է'ս-Դէ'“-ք—վոե վաշի
(Պատրիյօտ տու հէնց հեաչի...
(Կակ ժէ մօժնի ինաչի...)»—



— «Տվարիշչ Նուղի', հինչ էլ նի,
Հինչքան էլ նի պեչայլնի,
Ազգը, կողի, մեր տանջվի,
Սաղ հայ ազգը կօլ քինի,
(Պատրիյօտ տու լիս' հեաչի)
„Դըշնըկցիւթիւն“ պիտ կօրչի,
Հանցու Թօրքը հեանդեարդվի
Վէր կարի, նա, մեզ լըսի,
Հանցու մեզ հետ դըստանայ
Սոցյաւ-լիզմը հըսկանայ...»։

— «Ջա, չորս միլյօն, Թօրք գըաժղան
Ջեռք ընք քեաշիւմ հայ ազկան...
Սոտ-ցաւ-լիզմի իդէյի
Հայը մատաղ Թող ինի...
Էհ, շիւա-եաի, ղիփ մի՞ն չի,
Մէյլկի նարօդ պիտ' կօրչի...
Եննան Թօրքը կըյիշի,
Իսաօր'ին եա կըյեշի,
Իդէյի զօհ հայ ազգին,
Հարկ է, մէտը կըքիցի.
Կըհըրմանչի, մեզանչի,
Մէծ պամեատնիկ կըշինի...
(Բա մե՞զ, ափըստ ոլներիս
Անումնին հունց եր կինի...
Օ՞րին մատաղ հի՞բ կինի)...»

Բօ՛լ ա, կըտրի', շա'ն ղանջը՛ղ...
(Ջրկըլթացի նրա երրան,
Դէ հո՞ւնց հանի եա աշըղ,

Հի՞նչ տի ես նիւնց պըտըսխան…
Ջանըս եարա, նեղ սըրտըս,
Թիւլ ձեռքերում մըհակըս…)
Քե՛ցեք, հըղէն ձեր քե՛ցեք…
Պակալէնին ձեր հեանկվի,
Եկած հըղէն ձեր ցեաքվի…,
Դէ չի՛ւտ կօրեք ռեա՛դ ելեք,
Որ մըհակիս տակ չընկնիք…
Եկած հըղէն ձեր ցեաքվի,
Պակալէնին ձեր հեանկվի…

Անցին, հակ-հակ անելավ,
Քեցին կէզ-կէզ շըքռելավ…

Մնացի եանին երշելիս,
Ըրտասունքըս ըչքերիս,
Բօղման պըկիս խեղտելիս…
Ջեանիտ մատաղ, Քեա՜րիդ բաջ,
Դեարդիտ էլ դեարդ կըհանի,
Հինչ ասիմ քեզ Քեարիդ բաջ—
Սեւիտ զըլխին սեւ հեաքի…

Իստի ցաւեր քաշելիս,
Իստի հառանչ ընելիս,
Դեարդերիւմըս խեղտվելիս,
Տեսի քըշտաւ'ս ընցնելիս,
Կըռնըփըռնած ռուս կընգան,
Մեր էն շօն Վեարթիւնց Թռռան.-
(Պիւճիւր, պեարեակ, սեւլիկ հայ,·
Մէծ, հաստ, ուռռուս, շէկ կնէգ վայ…)



Եշկից ինձ շատ խոր եշկից,
Ղօրթ ա, հանց ար ծըծաղում,
Ամմա, տեսի, օնքերից,
Սել սել աղու էր կեաթիւմ…
Կըռքըներիս հով տըւի,
Ցաւեր դեարդեր մէջ'ս ըրի…—
- Դէ տրա՜քւիլ մի-պէ՛լ Շա՜ւղի,
Պըտռա՜տւիլ մի-իմ լըղի…

Ոններըս իմ Թիւլացին
Հու ճըկռեցի քիւչ'մէչին…
Գըրըդըվօյ սալդաթը,
(Կըտըրվի տիւնց միւրվեաթը),
Կըռնըտ'կերաս իմ փռնից,
Հու ըսկըսից քաշ տըւից…
— Ամա՛ն զիւն դը, սալդաթ ջան,
Թօղ մին պատառ ղինչեանեամ…
— «Պայղօն կակօյ տի ժանա
Պայղօն Դրեպով տի նու ժնա…»

Էտ դեարիւմը մէչ մըտաւ
Մին սեւ նախշուն հարուստ մարթ.
— «Պուստի, պուստի տի եյօ
Նա տէ բուըըլ զա նէյօ,
Վիդիշ անա ուստալա,
Անա նէ բուսկի բաբայ,
Ջտօբի պ'յանօյ նապիլաս
Նա ուլիցեա վալյեալաս…»

Հարուստ մարթին նա լըսից

Հու ինձ, հաւուր, պէց Թօղից:
Եննան հարուստը հու էն
Թաքուն էրկեան խըսեցէն...
Հըրուստի խօսք, հի՞նչ կընիս,
Հի՞նչ տէղ ասիս տէղ չօնիս...
Ես էն հրուստից շըշվեցի,
Աչքըս երրան քըցեցի,
Ընրա Թեւհրից յիեայի,
Դեարդըս, կասիս, մըռացի...
Թեւհր կըփըռնի նրա Թեւհրին.
Լօթ'եանա քցեած օսսերին,
Բրխուշխում քասթօր շինէլը,
Նրա Թեւարս փէշից բռնում էր
Ձերնաբուրի աստառը,
Վիզը կակուղ պատալ էր
Լէն բաբրովլի եախանը...
Շնէլից բռնում չէօրերից,
Հու նրանց ղումաշ կըտօրից,
Մարթ կըմրնար յիացած,
Հանցար երրան լեա Թափած,
Ասիս ձեռքեր չըն կարած...
Սիպտեակ ժլէթի յրան տեարսեած...
Բըրէղենավ գըրթեարեած,
Կուրչեարկ, կուրչեարկ ծրնըլերած,
Տըսըրտէս, տըսըրտէն քըղղօտած,
Վէօկէ սհաթէ զինջիլը
Դիւրիւստիւմ էր լեանջիլը:
Մըննէրին յրան ասիս լեա,
Մրտանէք չին քըղղօտած,



Երկինքիցը կասիս Թեա,
Աստղեր ըն յրան վէր եկած:
Էն վըննէրին չեաքմէքը,
Լըպըղտած ի՞ն կատվէքը...
Գըլխին նրա մին փափախ կար,
Ասիս, փափախ չէր, Թեաղ ար,
Ծըփըղտակից մազերը,
Կուրգնօտ, խըճօճ կազերը,
Թիլ, Թիլ արած տէս ու տէն,
Պրտատում ին ճակատը...
Էն նրա նախշուն իրեսը,
Ձալ չալ գեօղեալ աչքերը,
Սև սև էրկեան օնքերը,
Մըկնըհեաքիւ բէղերը,
Նըրա սուրաթ բօյին հետ
Կռև ին տալիս իւրիւր հետ:
Աչքե՛ր աչքե՛ր, հի՞նչ աչքեր,
Դէ կմ՞րում ըմ աչք կըտրիմ...
Հանց ծանօթ էր հանց մօտ էր...
Հանց էօղիւմ ի ճինեանչիմ...
Դիպ ինծ էշից ծըծաղից,—
Կասիս ինքն էլ ճինեանչից,
Վէր մին էլ նրան երշեցի,
Վէր էն աչքերը տեսի,
Բիրդեան կլեօխըս շօռ տըվից,—
— Վույ, քու ղուրբան, ճըն'չեցի,
Վեասեակ, մատաղ, քե՞ղ տեսի,
Էս արադ ա ըրկեօճի...
Իմ ախպօր տօնն էլ քեանդվի՞ց,
Կուքին ղըրկվից Վեասեակի՞ց...

— «Հա՛քու, տու ինձ ճըն՛չեցիր,
Խե՞ ըս տըխրում ըրխացիր,
Ես քեզ հըմար օրիշ չըմ,
Հալալ ախպօր վէրթի ըմ։
Վախիլ մի չեմ կեօղացալ,
Հարուստ ախճիգ ըմ էօզեալ»...
— Հա՜յ, ու՜ս, ասի, Վեասեակ ջան...
«— Հայ ըմ էօզեալ հաքու ջան,
Հէն է, տե՛ս իմ կընէկըս,
Եշի՛ հարսիտ հաւան ը՞ս,
Պէց կըրէթիւմ նըստած ա
Դիբբի աէսը եշիւմ ա,
Ես եշիւմ չըմ տու եշի,
Լեաւ եշի տես նա հա՜յ չի»։
— Հըվատում ըմ Վեասեակ ջան,
Բա վէր տու տի հարուստ ըս
Խե՞ իմ ախպօր օգնում չըս.
Բա նրա տօնը քեանդվեալ ա,
Իլեած-չիլեած էրվեալ ա,
Սև չոր հացի կարօտ ա...
— «Լսա՛լ ըմ, գիւտ՛մ ըմ, Թօղ, բօլ ա
Հեալեա դէ ես սանող ըմ,
Օգնել ես հի՞նչ կարող ըմ։
Իմ հեար ինձ հի՞նչ ա ըրալ,
Որ ես ընրա հինչ անիմ»։
— Վեասեակ՝ Կուքին կօրցրից լօխ...
— «Լսա՛լ ըմ, գիւտ՛մ ըմ, բօ՛լ ա, Թօ՛ղ,
Դէ ես մըհենգ փակւած ըմ,
Կընգաս քըշտին նըստած ըմ,
Ես հեալեա դէ սանող ըմ,



Օգնել ես հի՞նչ կարող ըմ»։
— Կուքին օնի ցա՛ւ խեխտող...
— «Լսա՛լ ըմ, գի՛ւտ՛մ ըմ, բօ՛լ ա, Թօ՛ղ,
Որ քու Կուքուն քըշտի՛ն ի,
Տըրխից գիւմեան հի՞նչ օնի...
Մհէնկ տեսնում ըս իմ թեահըր...
Խառնիլ մի տու իմ զեահըր...
Ես էօզիւմ ըմ լեաւ ապրիմ,
Կօնյա մըհէնկ կեանք քեաշիմ...
Հօրըս նըհեա պէն չօնիմ,
Ես ազկի ըմ ծըռայելու,
Մէծ անում ըմ եր 'նելու»։
— Վեասեակ որ տըրխավէր իր,
Կուքուն տու մէծ քեօմեակ իր,
Պիւճիւր վախտիթ հօտող իր,
Մէծուց կօղի շկօլում իր,
Էլլեա տանը օքնում իր։
Բա էտ նախշուն երեսը,
Էտ քու գեօզեալ աչքերը,
Էտ լաչին բօյ բուսաթը—
Քու հեար Կուքին քեզ բախշից,
Տու օգտվեալ ըս տրեանց անից,
Բա նա փայ չօնի տրեանցի՞ց։
— «Դէ հէրիք ա, բօ՛լ ա, Թօ՛ղ,
Լօխճին կըլխին թափվի հող։
Խարաբ մ'անիլ իմ քէփըս,
Տըխըրցընիլ իրեսըս։
Կա էս վէօկէն եր կալ ք՛նի,
Հանգու սեսըրա եր չինի։
Մընաս պարաւ քինիւմ ըմ,

Նրհախ շատ ըշանում ըմ,
Կընեգըս ինձ սպասում ա…
Մին տես շորեր'ս սեա՞զւում ա…»

Ասից հ'ռացաւ, Նըստից քնից,
Ես երշելիս նրա ետից…
Ջա՜ն Կուքի ջան, քէ մատաղ,
Կիւթեան տակի քըրթնըրնքից,
Վարու-ցանքի խլեածից
Վէրչի հատիկն ըս ծախալ
Տըղիթ ուսում տու տըվալ…
Քու էտ ջեանքիտ պըտըսխան
Տըղատ տըւաւ Կուքի ջան…

— Առ էս դէնգին դայ փայտոն
(Ըսեցի ես սըլդաթին),
— Սա՛դիս,-գուբուռնատ պայգօն…

Քեցինք հասինք պալատին…

Տրեպով աղին որ տեսի,
Դեաստի ռաչին չոքեցի,
Սէլ ըրտասունք թըփէցի,
Լըկլըկում սըրտըս պէցի.-
Մանրամասի պըտմեցի,
Աղկի ցաւը հըսկըցրի.
— Տրեպով աղա, քըմատաղ,
Որ տւնից լոխճին կըտորիս,
Եկեղեցի հանց գիտայ,
Աղկիս հըմար կըշինիս։
— Գիւլլեաթակ տօ աղա ջան,



Մեր էտ շան լըկըտներին,
Եա չի կեան տւնք մեր Ղալան,
Քու Աստուծու տու սէրին…
— «Նէտ, դիւշեայ մօյ, գլեա տակիխ
Մի պատրօնի ժալէեմ։
Զաչի՞մ բուդիմ բիտ մի իխ,
Ումնի, լիւդի մի բիյօմ…
Լուչչի փիւստ·անի ժիվիւտ,
Վաշ արմէնի կրասնէյիւտ։
Վաշիմ.—զօրէ փիս խոխայ,
Նաշիմ.—լուչչի պօմեխայ…»

Բեմըն, շոշւայ կընանէք,
Ձեր ընքընիթ խոր մըթին.
Եա կըկեան ձեր լըկըտնիք—
Ղալան կըլեօխ կըպերին։

Դըրդըրվեօտվեած ջանիտ մատաղ
Հըյըստանի քիւնջ-Ղալայ,
Նոր սերիւնդըթ է՞ս ա սա՜ղ,
Թեա բէ՛թթեարը կան հեալեա…—
Քեզ չօռ ու ցաւ, գեարգի-բալայ,
Դէ հէնց էս լեա քեզ բօլ ա…

Դեարվիշ տեառնեամ չեօլ'ն ընկնիմ,
Ղալին վայը ես քաշիմ,
Թեաշնեայ սև վէցի տակին
Դինջեանեալ չի պէլ Ճուղին…

Ցըվըվատուած ջեանիտ մատաղ՝
Քեանդվեած, բարբաղ խեղճ Ղալայ,

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Эривань, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ես վայ քաշիմ վէր վայան,
Վէր սէրտըս քու հըվանայ—

Վէրեա՜կ սեւա՜ծ սրնէ՜րիս—
Վույ Ղա՛լայ վա՜յ Ղա՛լայ վա՜յ,
Ժենգեա՜լ կօխա՜ծ քըրերի՜ս—
Վո՜ւյ Ղա՛լայ վա՜յ, Ղա՛լայ վա՜յ,
Սովա՜ծ, ծարա՜ւ փորերի՜ս—
Վույ Ղա՛լայ վա՜յ Ղա՛լայ վա՜յ,
Տըկլո՜ր, ջի՛վա՜ն ջեաների՜ս—
Վույ Ղա՛լայ վա՜յ Ղա՛լայ վա՜յ,
Բանկռօտ սեւա՜ծ սըղօցի՜ս—
Վույ Ղա՛լայ վա՜յ Ղա՛լայ վա՜յ.....

Բա ձե՞ղ զուրբան՝ հի՞նչ անի՞նք,
Ա՞ ղըլըցի կընա՜նիք...
Պերա՜ն պեացի՞նք, գեարդ լեալի՞նք,
Ա՞ սեւ ինի սաի տա՜րին...
Մատա՜ղ անի՞նք խաչ բինի՞նք,
Հօ՞ւնց ճոր անինք մեր ցաւին...

Դաղլա՜ր, դաշլա՜ր գեա՛րդ հազա՜ր...
Ազո՜ւ, լըղէ՞, գեա՛հրիւմա՜ր...

Մնամ ծառայ շըտահաչ՝
Ես միշտ ձեր դուռ Շուզի բաց,
'ի քաղաքէն Պըտըրպօլք
իզմայելովիակի պօլկ
Վտարդյ Րոտա համար չորս
'ի ամիսըն օգոստոս
Էս սև մըլթէն պյեամի
ինձը հեարիւր վէց ամի:
(Գրիւմ ըմ լթամամ իմ ագրիս,
Բեպլքի ծէն տաք Նըմակիս)

ՀՀ Ազգային գրադարան
NL0356309

22013